ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հրապարակվում է
“Գնումների մասին” ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը ՍՀԱԿ-ԷԱԱՊՁԲ-24/1

ՀՀ ԱՆ «Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար **մահճակալների** ձեռքբերման նպատակով կազմակերպված **ՍՀԱԿ-ԷԱԱՊՁԲ-24/1** ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 2024 թվականի հունիսի 6-ին և 11-ին ստացված պարզաբանումները և դրան վերաբերյալ 2024 թվականի հունիսի 7-ին և 11-ին տրամադրված պարզաբանումների պատասխանները՝

Պարզաբանում 1՝ Հարգելի գործընկեր, Գնման առարկայի անվանումը նշել եք շարժիչով մահճակալ, սակայն տեխնիկական բնութագրում նկարագրել եք մեխանիկական մահճակալ: Պահանջում ենք փոփոխություններ կատարել և ներկայացնել ճշգրիտ գնման առարկայի անվանում և պատշաճ տեխնիկական բնութագրեր:

Պարզաբանման պատասխան՝ Հարգելի գործընկեր, մահճակալների CPV կոդը նշել ենք շարժիչով սակայն ապրանքը ընդունելու ենք համաձայն տեխնիկական բնութագրի: Հիմք ընդունեք հրավերում նշված տեխնիկական բնութագրի պահանջները

Պարզաբանում 2՝ Բարև Ձեզ,խնդրում ենք պարզաբանել մահճակալները պետք է լինեն շարժիչով/էլեկտրական/ թե՞ բռանկի միջոցով /ձեռքով/ կարգավորվող:

Պարզաբանման պատասխան՝ մահճակալները պետք է լինեն բռանկի միջոցով /ձեռքով/ կարգավորվող:

Սույն պարզաբանման հետ կապված հարցերի դեպքում կարող եք կապ հաստատել **ՍՀԱԿ-ԷԱԱՊՁԲ-24/1** ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Մերի Մկրտչյանի հետ:

Հեռախոս՝ 055990090

Էլեկոտրանային փոստ՝ procurement@sevanhh.am